

ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երկվայ Մյն Թինի մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը:

Պերրիի այցելեցին նաեւ Պէյրութի քաղաքապետ Ապտէլմենէմ Արիս, Լիբանանի մէջ Բարաքի դեսպան Ապտալլա Պրն Համատ Խաթէր, Հոյանտայի դեսպան Ժան Տր Չուան եւ ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տիպա:

Պերրի երկվայ պաշտօնական հեռագիր մը յղեց Տրանսայի նախագահ Ժաք Շիրաքի, շնորհաւորելով Տրանսայի Ազգային Տօնը: Նոյն առիթով ան շնորհաւորական հեռագիր յղեց նաեւ Տրանսայի Ազգային Ժողովի նախագահ Ժան Լուի Տրպրէի եւ Վերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնսըլէի:

Պերրի հեռագիր մը յղեց նաեւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահ շէյխ Չայէտ Պրն Սուլթան Ալ Նահիանի, որուն մաղթեց շուտափոյթ ապաքինում:

ՕՊԷՅՏ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԵՐԵՎ ԴԵՍՊԱՆՆԵՐ



Արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երկվայ ընդունեց Լիբանանի մէջ երէք դեսպաններու հրաձեշտի այցելութիւնը եւ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի անունով դեսպանները պարգեւատրեց Մայրիներու շքանշանով:

Օպէյտ ընդունեց Լիբանանի մէջ Բարաքի դեսպան Ապտալլա Խաթէրը, Հոյանտայի դեսպան Ժան Տր Չուանը եւ Մարոքի դեսպան Ապտէլ Ժալիլ Ֆանժիրը:

ԼԻԲԱՆԱՆՑԻ ՆԱԽԿԻՆ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԱԼՆԵՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՆ

Երեսփոխաններ Ապտալլա Քասիր եւ Ալի Պազզի երկվայ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեցին, թէ իսրայէլեան բանտերուն մէջ աւելի քան 3 տարի արգելափակուած, այժմ ազատ արձակուած բանտարկեալները յառաջիկայ Հինգշաբթի օր ելեմուտքի նախարարու թեմէն պիտի սկսին ստանալ իրենց հատուցումները՝ համապատասխան օրէնքին համաձայն:

Միւս կողմէ, Քասիր եւ Պազզի ըսին, որ ընդհանուր շնորհի նախարար Ֆուադ Մինիորայի գործակցութեան եւ հատուցումները կատարելու իմաստով անոր տուած իրաւունքները ետք, ազատ արձակուած Լիբանանցի Արգելափակեալներու Միութիւնը որոշած է առկա ինքնախազէն որոշում մագլցողական քայլերը, որոնք պիտի գործադրուէին երկվայ:

ՀԱՐԻՐԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ԸՆԵ ՔՆՆԱՐԿԵՑ ՕԴԱՆԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվայ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Տրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ՝ շնորհաւորելով 14 Յուլիի Տրանսայի Ազգային Տօնը:

Վարչապետ Հարիրի հեռաձայնային այլ հաղորդակցութեամբ մը շնորհաւորեց շէյխ Սուլթան Ահմէտ Սուլթանը, Քուէյթի վարչապետ անոր նշանակումին առիթով:

Վարչապետ Հարիրի Քորայթէմի մէջ երկվայ կէսօրէ ետք գումարեց ժողով մը, որուն ընթացքին նախագահեց Օդանախորդութեան թղթածրարի քննարկման համար կազմուած նախարարական յատուկ յանձնախումբին, որուն մաս կը կազմէին նախարարներ Ֆուադ Մինիորա, Պահիժ Թապարա, Նեպի Միքաթի, Մարուան Համատ, Բարիմ Բագրատունի եւ նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար Սուհէյլ Պաուժի:

Ժողովին որդեգրուեցան նշեալ թղթածրարին առնչուած տարբեր օրինագիծեր, որոնք պիտի յղուին պետական շուրջի խորհուրդին եւ ապա՝ կառավարութեան:

Երկվայ վարչապետ Հարիրի այցելեցին գաղթականներու հարցերու նախարար Ապտալլա Ֆարիք, երեսփոխաններ Նապէմ Խուրի, Մոհամէտ Եահիա, Մարուան Ֆարէս, Ժըպրան Թըք, Լիբանանի մէջ գործող ՄԱԿի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Սամիր Տահէրի եւ լուսանկարիչներու սենտիքայի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Ժամալ Սայիտի:

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ՝ Ի ՆՊԱՍՏ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՉ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԱԼ ՆԵՐՈՒ

Իսրայէլեան բանտերուն մէջ իրաւանցի գերիներու հարցին իբրեւ զօրակցութիւն, երկվայ վարչապետարանին առջեւ տեղի ունեցաւ խորհրդակցական ցոյց մը: 14 Յուլիին՝ Լիբանանցի Գերի օրունակները: Յոյցին մասնակցեցան իրաւանցի արգելափակեալներու ծնողներ, անոնց կառավարելու եւ բարեփոխական ու ընկերային ծառայութիւններ մատուցող միութիւններու ներկայացուցիչներ:

Լիբանանցի արգելափակեալներու հարցով վերադարձ յանձնախումբի ընդհանուր քարտուղար Մոհամէտ Սաֆա կարմանք յայտնեց ապահովական խիստ միջոցառումներուն գծով եւ շեշտեց, որ միութեան կատարած ցոյցը խաղ է եւ խորհրդանշանական: Ցուցարարները լուսախաբութիւն յայտնեցին վարչապետ Ռաֆիք Հարիրիի կողմէ վերջնական ընդունումները: Այս պահանջով անոնք իրենց ուղերձը յանձնեցին կառավարութեան ընդհանուր քարտուղար Սուհէյլ Պաուժի:

Ուղերձին մէջ միութիւնը կառավարութեան նախաձեռնումները տեղեկատուական արշաւի մը, ինչպէս նաեւ պաշտօնական բողոքագիր մը յղելու ՄԱԿին՝ բողոքելու համար իսրայէլի կողմէ կատարուող օդային եւ ցամաքային «Կապոյտ Գիծ»ի սահմանային խախտումներուն դէմ:

Միութիւնը կողմնակցեց նաեւ տեղեկատուութեան նախախառնութեան՝ նախաձեռնումները տեղեկատուական արշաւի մը, ինչպէս նաեւ պաշտօնական բողոքագիր մը յղելու ՄԱԿին՝ բողոքելու համար իսրայէլի կողմէ կատարուող օդային եւ ցամաքային «Կապոյտ Գիծ»ի սահմանային խախտումներուն դէմ:

ՖԱՏՆԱԼԼԱ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՅԺԻՆ

Հրկապալայի հոգեւոր պետ շէյխ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երկվայ ընդունեց ՄԱԿի տեղեկատուական գրասենեակի պատասխանատու Նեպի Ֆարայի, որուն հետ քննարկեց իրաքի մէջ ՄԱԿի ներկայ գործունէութեան եւ իրաքեան թղթածրարին նկատմամբ ՄԱԿի դիրքորոշումին առնչուող խնդիրներ:

Շէյխ Ֆատալլա հանդիպումին ընթացքին շեշտեց իրաքի մէջ ՄԱԿի դերակատարութեան անհրաժեշտութիւնը՝ հեռու որեւէ միջազգային ճնշումէ: Ան աւելցուց, որ որոշ շրջանի մը համար ոչ - իրաքեան վարչակազմի մը կողմէ իրաքը ղեկավարելու երեւոյթը նախատական է իրաքի ժողովուրդին համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՋԷ ՍԵԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆԻ
ԱՄԱՌՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
15 ՅՈՒՆԻՍ - 15 ՍԵՊՏԵՄԵՐ
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ - ՈՒՐԱԸԹ
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԱՆ 8:00ԷՆ
ԿԵՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՄԱՆ 4:30
ԳՐԱԽԱՆՈՒԹԸ ԲԱՅ Է
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԱՆ 7:30ԷՆ
ԿԵՍՕՐԷ ԵՏՔ ԺԱՄԱՆ 5:30
ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ ԺԱՄԱՆ 7:30ԷՆ 1:00
«ՀԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԳՐՈՆ, ՀՏՈ. 01-241263/4

ՔԱՐԱՅԱՆՔԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՐՑ

ՄԻՔԱԹԻ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հանրագուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեպի Միքաթի երկվայ անգամ մը եւս պահանջեց կառավարութեան վերատեսութեան ենթարկել քարային քարանձառներու փակման առնչուող որոշումը, նկատել տալով շինարարական նիւթերու երկրին կարիքը:

Միքաթի նշեց, որ կարելի չէ միայն քարահանքերու ճշդումը չէ, այլեւ՝ հարկ եղած արհեստագիտական եւ կենսոլորտային չափանիշներու ճշդումը, խուսափելու համար ապօրինի գործունէութիւններու հաւանականութենէն:

Միքաթի նկատել տուաւ, որ քարահանքերու աշխատանքը կ'ընդգրկէ բազմաթիւ փոխադրակառքերու գործածութիւնը, ինչպէս նաեւ մեծ թիւով աշխատատեղեր: «Հետեւաբար, նման հսկայ տարողութեամբ աշխատանքային դաշտ մը փակելու որոշումը պիտի ստեղծէ ընկերային անհանդուրժելի պայմաններ», աւելցուց ան:

Միքաթի ընդգծեց, որ երկրաշարժներու եւ կապալառուներու սենտիքաներուն (Աքքար) երկվայ ան գործադուր կոչ մըն է վերատեսութեան ենթարկելու որոշումը եւ յոյս յայտնեց, որ տեղի ունեցած հաղորդակցութիւնները առաջնորդեն այլ որոշումով մը, որ նկատի կ'առնէ տնտեսական, կենսոլորտային եւ ընկերային բոլոր երեսները:

ՍՖԷՅՐ ԻՐ ԱՅՅԵԼՈՒՆԵՐՈՒՆ ՇԵՏ ԶԵՆԱՐԿԵՑ ՆԵՐԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Մարոնիներու Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքը երկվայ ընդունեց ճարտարարուեստի նախարար Էլիաս Սքաֆը, որուն կ'ընկերակցէր ճարտարագէտներու պատուիրակութիւն մը:

Հանդիպումին քննարկուեցան ճարտարարուեստի մարզին առնչուած հարցեր, ինչպէս նաեւ տնտեսութեան վրայ անոր ունեցած կարելու ազդեցութիւնը:

Սքաֆ յայտնեց, որ Սֆէյր պատրիարքի կեցածքները մեծապէս նպաստած են երկրին քաղաքական կայունութեան եւ դարձած են առողջ երկխոսութեան յարաբերութեան զօրակցող երաշխիքներ:

Սֆէյր պատրիարք ընդունեց նաեւ երեսփոխան Քապալան Իսա Խուրիին, որուն հետ քննարկեց ներքին անվտանգութեան եւ շրջանային հարցեր: Խուրիի դրուատեց վերջին ժամանակաշրջանին Սֆէյր պատրիարքի արտայայտած կեցածքները, որոնք նպաստեցին երկրին կայունութեան:

Տիմանի այցելուներէն եղան նաեւ հիւսիսի նահանգապետ Նասիֆ Քալուշ, Լիբանանի մէջ Աւստրալիոյ դեսպան Սթեֆանի Շուսպաքի, հիւսիսի մէջ բանակի հրամանատար Վոր. Պահիժ Ապու Շաքրա եւ հիւսիսի բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն Վոր. Օմար Հալապի:

ASHJIAN TOURS
30 Յուլիս 6 Օգոստոս «VARNA» պանդոկ,
Մախաձաշ եւ օդանաւի տոմսը միայն 250\$:

ՈՒՍՈՒՑԻՉ ԿՈՒՉՈՒԻ
Հայ Աւետ. Բոլեժ Գիտութեան (կենսաբանութիւն եւ ընդհանուր գիտութիւն) մասնաճիւղի ընդունելի մը պետք ունի մայիս. Դէմ Ժ. դասարաններուն համար: Գիտել տնօրէնութեան, Երկուշաբթի Ընթաց կէսօրէ առաջ ժամը 9:00ԷՆ կէսօրէ ետք ժամը 1:00: ՀՏՈ. 349816:

ՄԱՀԱԶԴ
Տիկին Իգապէլ Սիմիթեան եւ գուստոր՝ Էվլին Տէր եւ տիկին Շահէ եւ Քաթիա Պաժիկեան եւ զաւակուրք

Սիմիթեան ընտանիք
Թիւֆէնքեան ընտանիք
Աբիկեան ընտանիք
Տէր եւ տիկին Գրիգոր Պուլաքեան եւ զաւակուրք
եւ համայն ազգականներ կը գուստոր իրենց զաւակին, եղբոր, քեռիին եւ հարազատին՝

ԺԱԸ ՍԻՄԻԹԵԱՆԻ
(Ծնեալ՝ Պէյրութ, 1957ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 14 Յուլիս 2003, առաւօտեան ժամը 2:15ին, Յունական հիւանդանոցին մէջ:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 15 Յուլիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Էլեքթրիկ Ս. Յակոբ Եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրժ Համուրի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայի ընդունիլ իբրեւ մահապղծ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ Եկեղեցու արահին մէջ, կէսօրէ ետք ժամը 2:00ԷՆ երեկոյեան 8:00ը, Երեքշաբթի 15, Չորեքշաբթի 16 եւ Հինգշաբթի 17 Յուլիսին:

ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ
ՀԳ. ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ՄՈՒՏՔԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ Կաթողիկոսութեան Գրեթեմարի Տեսչութիւնը ընդունեց իր յայտարար, թէ արդէն իսկ սկսած է Գրեթեմարի կրթական յառաջիկայ ՀԳ. (74րդ) տարեշրջանին համար նոր սաներու արձանագրութիւնը:

Մուտքի արձանագրութիւնն ու քննութիւնը տեղի պիտի ունենան Երեքշաբթի, 15 Յուլիսին մինչեւ Հինգշաբթի, 24 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 9:00-12:30, Մայրավանքին ներս, Անթիլիաս:

Ներկայացող թեկնածուները պարտին ըլլալ միջնակարգի եւ երկրորդական ուսման ընթացքին մէջ եղողներ, աւարտած նախակրթարանի ուսումը եւ ամբողջացուցած առնուազն 13-14 տարիքը: Քաջալեռելի են յատկապէս մեծ տարիքով տղաքը՝ համալսարանական կրթութիւն ստացած կամ այդ հասցրուանին մէջ եղողները:

Ներկայացող թեկնածուները պարտին իրենց հետ բերել՝

- 1.- Բարի վարուց վկայագիր՝ ծխատեղ քահանային
 - 2.- Հաստատագիր՝ դպրոցի ծխատեղ քահանային
 - 3.- Վերջին տարուան վիճակագրոյցը
 - 4.- Բժշկական վկայագիր
 - 5.- Անձնաթուղթի լուսապատճէնը
 - 6.- Երկու գունաւոր լուսանկար
- Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ Գրեթեմար յաղարկէն ուսումնապէս փայլուն, Հայ Եկեղեցույ ու ազգին ծառայելու ատակ եւ կարող պատկանէ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ

ԼԻԲԱՆԱՆ ԿԵ ԳԻՄԱԳՐԱԿԵ ԿԱՐԵԻՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ

Մշակույթի նախարար Ղազար Արիտի երեկ շեշտեց, որ Լիբանան խաղաղություն կը պահանջէ: Ան յոյս յայտնեց, որ լիբանանցիներուն, սուրիացիներուն եւ պաղեստինցիներուն իրաւունքները պահանջող միջոցառումներն ու գործընթացները յաջողութեամբ կը պատկուին:

Արիտի սակայն նկատել տուաւ, որ նշեալ պարագանները հեռու կը մնան նոյնիսկ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի ճամբու քարտէսին:

Արիտի դիտել տուաւ, որ Լիբանան կը գտնուի, իշխանութեան եւ պետութեան հանգամանքին մակարդակներուն վրայ, մեծ քննութեան մը առջեւ, աւելցնելով, որ յստակ է թէ քարահանքերու փակման եւ մարտի գործածութեան թղթածրարներուն առնչութեամբ ընթացք առած ձգձգումի քաղաքականութիւնը պիտի շարունակուի:

Նշեալ յայտարարութիւնները Արիտի կատարեց տիկիններ Իտալ Սապի եւ Աթէ Բիշանիի պարգետարման հանդիսութեան ընթացքին, ուր կը ներկայացնէր նախագահ Վոր. Էմիլ Լահուտը:

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐ ԿԵ ԳՈՒՄԱՐԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

- Տեղեկատուութեան եւ հաղորդակցութեան միջոցներու երեսփոխանական յանձնախումբը, նախագահութեամբ Ալտէլ Լաթիֆ Չէյնի, վաղը կէսօրէ առաջ ժամը 11:00ին պիտի գումարէ ժողով մը, որուն ընթացքին պիտի քննարկէ հաղորդակցութեան միջոցներու նախարարութեան եւ Օժերոյի մէջ աշխատող պաշտօնեաներու մասկան ղրորութեամբ հատուցում կատարելու առնչուած օրինագիծերը:

- Վարչական հարցերու արդարադատութեան երեսփոխանական յանձնախումբը յառաջիկայ Հինգշաբթի, նախագահութեամբ Միխայիլ Տահէրի, պիտի գումարէ ժողով մը, որուն ընթացքին վերատեսութեան պիտի ենթարկէ պատիժներու առնչուած օրէնքերը:

- Մշակույթի եւ բարձրագոյն ուսման երեսփոխանական յանձնախումբը, նախագահութեամբ Պահիա Հարիրի, յառաջիկայ Երկուշաբթի պիտի գումարէ նիստ մը, որուն ընթացքին պիտի քննարկէ տարրական ուսում ստանալու անհրաժեշտութիւնը եւ վայն պարտադիր ուսումով փոխարինելու յատուկ օրինագիծ մը ստեղծելու կարելորութիւնը:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՔԱՆՍՈՅԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԳԱՂԹԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐ

Պաղեստինեան կազմակերպութեանց մէկ պատուիրակութիւնը երէկ այցելեց պետական նախարար Ասէմ Քանտարի, որուն հետ քննարկեց պաղեստինեան գաղթականներուն ընկերային կացութիւնը, պահանջելով պաղեստինցիներուն շնորհել սեփական կայուններ ունենալու իրաւունք:

Հանդիպումին ւարտին պաղեստինեան կազմակերպութիւններու ներկայացուցիչները շեշտեցին, որ կը մերժեն Լիբանանի մէջ պաղեստինցիներու բնակեցումը եւ կառչած կը մնան պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքին: Անոնք աւելցուցին նաեւ, որ նախնադատներու եւ Լիբանանի ապահովութեան եւ երկրի մէջ գոյացած ազգային երկխօսութեան ու համերաշխութեան, որոնք կը հովանաւորուին նախագահ Վոր. Էմիլ Լահուտի կողմէ:

ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Աուրարի ամերիկեան դեսպանատան մէջ երէկ յետմիջօրէին ստորագրուեցան գործակցութեան համաձայնագիրներ, դեսպանատան եւ ամերիկեալիբանանեան ոչ - պետական հաստատութիւններու միջեւ:

Նշեալ համաձայնագիրներուն նպատակն է գործակցիլ Հըրմէլի, Նապաթիի, Հասպայայի, Ռաշայայի, Ժեպլիի, Ժիպէլի եւ Շուֆի մէջ լուծելու համար աղբանոցներու եւ ապականած ըմպելի ջրերու հարցերը:

●ԱՅՍՈՒՐՏԻ ԱՌԽԱՐԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ ՄԵՆՈՒ ՎԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԲՈՂՈՐՔԻ ԳՅՈՅ ՄԸ ՀԱՊԱՅԻՆԻ ԵՒ ՍԱՅՏԱՅԻ ՄԸ ՖԱԿԵԼՈՒ ԽԱԿԱՅ ԱՂՔԱՆՈՑՆԵՐԸ ԵՒ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ յՈՐՄԱՐ ԼՈՒԾՈՒՄ ՄԸ ԳՈՒՆԵԼՈՒ ԱՆՈՑՆԸ:

ՌՈՒՐՏԱՆԻԷԻ ՀԱՐՑԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Գաղթականութեան եւ գաղթականներու հարցերու նախարար Ալտալա Ֆարհաբ երէկ ընդունեց երեսփոխան Ալաէտտին Թըրոն, որուն հետ քննարկեց երկրին տնտեսական կայունութիւնը եւ Ռարտանիէ գիւղաքաղաքի կարիքները:

Ֆարհաբ ընդունեց նաեւ Ռարտանիէի քաղաքապետները, որոնց հետ նախարարութեան ընդհանուր տնօրէն Ահմէտ Մահմուտի ներկայութեամբ գումարեց ժողով մը: Ժողովին ընթացքին որոշուեցաւ շրջանի պահպանութեան վերաբերեալ քննարկել եւ շրջանը վերաշինութեան ներկայացնել, վայն վերածելով պրօսպարութեան գրաւիչ վայրի:

Քննարկուեցան նաեւ շրջանին մէջ գտնուող բնակարանները վերանորոգելու անհրաժեշտութիւնը: Այս առումով որոշուեցաւ ամէն ջանք ի գործ դնել, որպէսզի պատասխանատու անձնաւորութիւններ իրականացնեն նշեալ աշխատանքները:

ՀԱՄԱՌՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՍՅԹԵՐԸ

Պաշտպանութեան նախարար Մահմուտ Համուտ երէկ Եարպէի մէջ ընդունեց երեսփոխան Ալաի Չապթեր, որուն հետ քննարկեց ներքին լիբանանեան հարցերը:

Հանդիպումին շեշտուեցաւ ազգային միասնականութեան ու գործակցութեան անհրաժեշտութիւնը ներկայ շրջանային պայմաններու լոյսին տակ:

ՊՐԸՎԷԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅԱՆՑԻ ՎՐԱՅ

Պետական քննութեան արագրութեան յանձնախումբերու ընդհանուր տնօրէն Ժորժ Սամէ երէկ յայտարարեց, որ հետեւելով կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Մամիր Ժաբրիի ցուցումներուն, պրէզիդէնտ պետական քննութեան արագրութիւնը սկսած է եւ արդիւնքները նախագահ առ նախագահ պիտի պետեղին համաձայնի հետեւեալ կայքին վրայ. - www.schoonet.edu.lb

Նսամէ յոյս յայտնեց, որ արդիւնքները պիտի սկսին նշեալ կայքին վրայ պետեղուիլ այս շաբթուան ընթացքին:

ՇԱՐՈՒՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐՈՒՆ՝ ԻՐԱՔԻ ԵՒ ՅԱՏԿԱՊԵՍ ...

Շարունակուած Ա. ԷլԷն

իրկացիները սափափու են: Անոնք պնդումներ ցուցնում են, որ իրաքցի պիտուորները կրնան իրենց վէնքերը դարձրնել ամերիկացիներուն վրայ, եթէ խոստացուած վճարումները չկատարուին:

ԽՈՐՀՈՒՐԸ ԿՈՂՁՈՒՆՈՒԻ

Կիրակի օր յայտարարուած է պաշտօնապէս առաջին նիստը գումարած ամսամեայ իշխանութիւն ունեցող խորհուրդը ողջունուեցաւ շատերու կողմէ, թէեւ եղան նաեւ քննադատական արտայայտութիւններ: Իրաքի շիիները ներկայացնող գլխաւոր շարժումներէն մէկը պնդումներ կը արտայայտէր խորհուրդին կողմէ, որ իրենց վերջին կազմութիւնը, կոչ ուղղելով անոր անդամներուն իրաքի շահէ-

ներուն ընթացքին: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով իբրեւ ճիշդ ու զրական քայլ ողջունեց խորհուրդին կազմութիւնը կազմակերպելու միջոցով իրենց ընդունուած քայլ մըն է, բայցեւայնպէս անկազմ չ'արտացոլար պարզ իրաքցիներուն յոյսէն: Անուստի ընդունուած քայլն է անկախութիւնները: Սատըր Հիմնարկը, որ շիի մեծագոյն խմբակներէն մէկը կը նկատուի, ներկայացուցիչ չ'ունի յառաջացուած խորհուրդին մէջ: Բանքերը յոյս յայտնեց, որ խորհուրդի 25 անդամները տարակարծութիւններ չ'ունենան, երբ նախարարներ եւ այլ պաշտօններ շնորհուրդին հետ:

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խալիք Մոյանա իր կարգին ողջունեց խորհուրդին կազմութիւնը: Բաթար կոչ ուղղեց

Ալիօ Մարի ըսաւ, որ քննիչներուն վերադարձը միակ միջոցն է փարատելու ամէն կասկած, որ կ'առնչուի իրաքի հաւաքական քանդումի վէնքերու պահեստին գոյութեան:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ «Քիֆաի Արապի» օրաթերթը քննադատեց խորհուրդը, դիտել տալով որ անկախ սխալ որոշում մը տուաւ, երբ Մատամի ստապիման օրը՝ 9 Ապրիլ, ազգային տօն է պետական արձակուրդ հռչակեց: «Արապի» հարց տուաւ, որ ինչպէս կարելի է այսպիսի տօն հռչակել այն օրը, երբ իրաք կորսնցուց իր անկախութիւնն ու գերիշխանութիւնը: Տրամաւայի պաշտպան նախարարը երէկ կոչ ուղղեց ՄԱԿի վէնքի քննիչներուն աշխատանքին վերսկսման իրաքի մէջ: Միշէլ

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue Damas
Tel: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561
Rue Sidani - Face cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739882 (pbx) - Fax: (01) 340473
Website: <http://www.taniatravel.com>

CHARTERS
ARMENIE
Programme avec Tours (7 et 8 jours)

ATHENES
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE
Croisieres vers les iles Greques

RHODES
(8 jours)
Départs tous les Mardis a partir du 15/07

PARIS+COTE D'AZUR
Avion + Grand choix d'Hôtels en B/B
Possibilités d'extension a Lourdes, EuroDisney etc.

ITALIE (du Nord et du Sud)
10 Programmes différents (8 à 15 jours)

AUTRICHE
Différents programmes, Hôtels, Tours

ESPAGNE, PORTUGAL et MAROC (Villes Impériales)
10 Programmes différents (8 à 18 jours)

EGYPTE
Le Caire & Croisière sur le Nil-Louxor & Assouan
Sharm el Sheikh, Hurghada, Alexandria

CIRCUIT TUNISIE
Sousse & Hammamet

MALAISIE & THAILANDE
Différents programmes (Tours organisés)

POSSIBILITES DE CREDIT
Jel-el-Dib: 710305/67, Jounieh: 913746/934466
Bikfaya: 982040, Kaslik: 218821/218391
Jbeil: 942741, 943988, Zahle: 896947/892592
Saida: 730870/736870, Tripoli: 627755/602469
Amioun: 950075

ASHJIAN TOURS
17-31 Օգոստոս Երեւան-Ճաղկաձոր, Սեւան լճան պտղաբերով և վիզան եւ օդակայանի տուրքը միայն 625\$-ն սկսեալ:
Տե՛լ. 01- 261177, 240654 եւ 03- 233978:

ԱՅ ԴԱՏ

ԱՅ ԴԱՏ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՆ ԳԻՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱՐԻՆԷ ՊԻՐԱԶԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր շարժվելով Վերջինիս նահանգի Ալեքսանդրիա քաղաքին մէջ Միացեալ Նահանգներու հանրային վարժարաններուն մէջ գործող շուրջ 150 կրթական մշակներ մասնակցեցան «Նորարարութիւն եւ գործակցութիւն» խորագրով երկօրեայ դաստիարակման ծրագրին, որուն նպատակն էր պատմութեան դասատուներուն համար առիթ ստեղծել՝ միասնաբար քննելու պատմութիւնը արդու եւ ստեղծագործ միջոցներով դասաւանդելու կարելիութիւնները:

Համագումարին մասնակցեցաւ Միացեալ Նահանգներու Հայ Դատի Ցանձնախումբի վարժողական ծրագիրին հետեւող Կարինէ Պիրազեան՝ հանրային երկրորդական վարժարաններու ուսուցիչներուն ներկայացնելով Հայկական Յեղասպանութիւն նիւթը, որ այժմ մաս կը կազմէ Ամերիկայի վարժարաններու կրթական ծրագրին:

Համագումարը կազմակերպուած էր Ամերիկեան պատմական ընկերակցութեան եւ Ամերիկեան պատմագէտներու ընկերային ուսմանց եւ կազմակերպութեան ազգային խորհուրդին կողմէ:

Համագումարին ընթացքին, Կարինէ Պիրազեան ուսուցիչներուն ուղղելով իր խօսքը՝ անոնց թելադրեց Հայկական Յեղասպանութեան մասին պրպտումներ կատարել՝ այս նիւթը աշակերտներուն դասաւանդելու համար:

«Միացեալ Նահանգներու հանրային երկրորդական վարժարաններուն մէջ դասաւանդող ուսուցիչներուն հետ խօսելով, յստակացաւ, թէ անոնք որոշ ծանօթութիւն ունին 1915էն 1923 հայ ժողովուրդին դէմ կատարուած բռնարարներուն մասին, եւ երբ իրենց տրամադրուին այս նիւթը դասաւանդելու համար պէտք եղած տեւեակները, անոնք պիտի փափաքին Յեղասպանութիւնը ներառել իրենց ծրագրին մէջ», ըսաւ Պիրազեան:

Համագումարին մասնակցող կրթական մշակները հետաքրքրութեամբ ընկալեցին Յեղասպանութեան նիւթին մասին իրենց տրամադրուած նիւթերը, որոնք մէջ կային օրինակներ «Հայկական Յեղասպանութիւնը» 1915-1923, ձեռնարկներ աշակերտներու եւ ուսուցիչներու համար՝ հրատարակութեան, ինչպէս նաեւ՝ ուսուցիչներու տրամադրուած այլ աղբիւրներ:

Նիւ Ճորջիի «Սամիթ» երկրորդական վարժարանի ուսուցչուհի Էլիզաբեթ Էլերն Հայկական Յեղասպանութեան նիւթը աշակերտներուն դասաւանդելու կարեւորութեան անդրադառնալով, ըսաւ. «Հայկական Յեղասպանութիւնը նիւթ մըն է, որուն մասին աշակերտներուն մեծ մասը երբեք լսած չէ, հետեւաբար ասիկա կրնայ ուժեղ եւ տպաւորիչ դասընթացք մը ըլլալ: Ես ընդհանրապէս տուեալ նիւթին դասաւանդութիւնը կը համարեմ Հայկական Յեղասպանութեան նկատմամբ թուրք կառավարութեան ունեցած այժմու կեցուածքով, ինչպէս նաեւ՝ Բիւրճիի կառավարութեան մօտեցումով»:

Յայտնենք, թէ Կարինէ Պիրազեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի «Լէօ Սարգիսեան» վարժողական ծրագիրին հետեւող ինը անդամներէն մէկն է: Նշեալ ծրագիրը 19 տարիէ ի վեր կը գործադրուի ամերիկահայ ուսանողներուն, զանոնք պատրաստելու համար՝ իբրեւ վաղուան ազգային գործիչներ:

ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԷ «ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ» ԹՈՒՐՔԵՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԲԱՅՈՒՄԸ...

Թուրքիոյ մէջ վերջերս տեղի ունացած է Յունուար 1915ին հայերու կողմէ «հրկիզուած» 300 թուրքերու յիշատակին նուիրուած յուշարձանին բացումը: «Թըրքիշ Տէյլի Նիուզ» կը հաղորդէ, որ Աթթաթիւրը համալսարանի հայ-թրքական յարաբերութիւններու հետազոտութեան կեդրոնի փոխ տնօրէն փրոֆ. Էրոլ Քիւրբը-ճիւզը յայտարարեց իր արձագանքը: Իր խօսքով իր կարգին դիտել տուած է, թէ «այսպէս-կոչուած» Հայկական Յեղասպանութեան մասին խօսողները «թշուառականներ» են:

ԹՐՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ՔՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐԷ ԿԸ ՊԱՏՄԱՆՁԵՆ ՉՃԱՆՉՆԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Ցանձնախումբը հաղորդեց, թէ թուրք ճարտարագէտներու եւ գործարարներու կազմակերպութիւնը (ԹՈՒՍԻԱՏ) Միացեալ Նահանգներու բնակչության ներկայացուցիչներուն հետ կապ պահելու ջանքերը բանաձեւելին՝ փաստարկելով, թէ՛ «այդ մէկը արգելք կը հանդիսանայ հայ-թրքական յարաբերութիւններու ամրապնդման»:

ԹՈՒՍԻԱՏ յայտնած է, թէ՛ «այսպէս կոչուած Հայկական Յեղասպանութեան ճանաչումը Մերալոյսին եւ ներկայացուցիչներու ճան կողմէ մեծապէս կը վնասէ թուրքեւամերիկեան յարաբերութիւններուն, որոնք իրաքեան պատերազմէն ի վեր արդէն իսկ ոչ նախանձելի պատերազմ տուած են: ԹՈՒՍԻԱՏ համաձայն, թուրքեւ եւ Միացեալ Նահանգներ դաշնակիցներ են, երկու երկիրներուն միջեւ գտնուող լաւ յարաբերութիւնները տասնամեակներէ ի վեր գոյութիւն ունին ու օրէ օր կը բարելաւուին ու կը զարգանան, իսկ հիմա, որ այս բարեկամութիւնը որոշ դժուարութիւններ կը դիմարտանէ, պէտք է յաւելնել ջանքերը՝ թափել եւ խուսափել այն խնդիրներէն, որոնք աւելի եւս ճնշել կը դարձնեն միջոցառումներ, որպէսզի կարելի ըլլայ յարաբերութիւնները՝ եւ նպաստել յարաբերութիւններուն բարելաւման ու զարգացման: Ինչ կը վերաբերի Հայկական Յեղասպանութեան բանաձեւին եւ Յեղասպանութեան ճանաչման, այդ մէկը, ըստ ԹՈՒՍԻԱՏի, անպայմանօրէն իր ժխտական անդրադարձը կ'ունենայ ապագայի թուրքեւամերիկեան յարաբերութիւններուն վրայ եւ կ'օգնէ կոնկրետ քայլերու, որոնք կ'ընդհատեն թուրքեւամերիկեան յարաբերութիւններուն վրայ եւ կ'օգնէ կոնկրետ քայլերու, որոնք կ'ընդհատեն թուրքեւամերիկեան յարաբերութիւններուն վրայ եւ կ'օգնէ կոնկրետ քայլերու»:

Հակառակ այն բոլոր փաստերուն, որոնք կը հաստատեն Հայկական Յեղասպանութիւնը եւ հակառակ այն իրողութեան, որ բոլոր պատմագէտներն ու այս հարցով հետաքրքրուող մասնագէտները (անչո՛ւշտ զանց առնելով անոնք, որոնք կը գտնուին թրքական վարչակարգին ազդեցութեան տակ) թուրքերուն բացարձակ 1915ի «ցաւալի դէպքերը կ'որակեն յեղասպանութիւն» հիմունքներով ճշգրտագոյն կոչումները օրէնքներուն վրայ, ԹՈՒՍԻԱՏ կ'ընդդիմանայ եւ կ'ըսէ, թէ նման ճակատագրական եւ չափազանց կարեւոր հարցերու շուրջ կարելի է քաղաքական որոշում պէտք չէ տրուի՝ առանց խնդիրն պայմանութիւններու մանրամասնութիւնները լաւագոյն ըմբռնած փորձառու պատմագէտներու եզրակացումները լսելու: Աւելի՛ն՝ որեւէ բանաձեւ, որ կ'որոշեցրէր եւ կամ նոյնիսկ կը ջնջուի՝ առանց մանրամասնութեան եւ հետազոտութեան, կը նմանի առանց փորձի գործադրութեան անցնելու:

«Նախքան լուրջ հետազոտութեան եւ հետազոտման համարձայնի եւ անհրաժեշտ լուրջ հարցերու վերաբերեալ իրարմիջեւ կ'ապագայի թուրքեւամերիկեան յարաբերութեան անցնելու», կ'աւելցնէ ԹՈՒՍԻԱՏ: Թրքական այս կազմակերպութիւնը, որ ի միջիւն կայ յարաբերութեան ունիւնեւեւ եւ Պրիւքսէլի մէջ, իր առաջնութիւնը փակած է՝ նշելով, թէ «Հայկական Յեղասպանութեան հետ առնչուող բանաձեւերուն»:

Թրքական այս կազմակերպութիւնը, որ ի միջիւն կայ յարաբերութեան ունիւնեւեւ եւ Պրիւքսէլի մէջ, իր առաջնութիւնը փակած է՝ նշելով, թէ «Հայկական Յեղասպանութեան հետ առնչուող բանաձեւերուն»:

որդեգրուած կը ցրուէ թրքական յարաբերութիւնները բարելաւելու յոյսերը՝ նկատի ունենալով, որ անիկա յարուածութիւնը կը սրէ եւ անկարելի կը դարձնէ սերտացման ճիգերը, մինչ նման բանաձեւերու բացակայութեան կարելի կ'ըլլայ հայ եւ թուրք քաղաքացիներուն համար ներդաշնակ կեանք ապահովելը»:

Միւս կողմէ, ԹՈՒՍԻԱՏի յայտարարութիւններուն անդրադառնալով՝ Միացեալ Նահանգներու Հայ Դատի Ցանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան ըսաւ. «Մտահոգ ենք ԹՈՒՍԻԱՏի ինքզինքը ճշգրտագոյնութեան ժխտումին կատարուած յայտարարութիւններէն, սակայն այդ մէկը մեզի համար անակնկալ մը չէ երբեք: Նորութիւնը պարզապէս այն է, թէ նախապէս միշտ հակահայ յարձակողական ուժ որդեգրող ԹՈՒՍԻԱՏ ներկայիս ինքզինքը կը ներկայացնէ իբրեւ «հայերու բարեկամ» եւ այդ միջոցով իր ժխտումի քաղաքականութիւնը կը կիրարկէ՝ պատճառաբանելով, թէ իր միակ նպատակը հայ-թրքական յարաբերութիւններու զարգացումն է»: Ա. Համբարեան աւելցուց. «Փոխանակ անօգուտ ու սին ճարտարութիւններու դիմելը, ԹՈՒՍԻԱՏը, թրքական կառավարութիւնն ու անոր օրէ օր նուազող դաշնակիցները պէտք է համաձայնի եւ անհրաժեշտ է, որ հայ-թրքական յարաբերութիւնները կրնան հաստատուիլ միայն ու միայն ճշգրտագոյնութեան ճանաչումով»:

Նշենք, թէ աւելի ուշ «Անատոլի» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ 9 Յունիսին ամերիկաբնակ թուրքերը հետազոտման կազմակերպութեան համարձայնի կապ պահած են ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ՝ դէմ դնելու համար Հայկական Յեղասպանութեան բանաձեւին որդեգրմանը:

ՅԱՏՈՒԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԷՎԸՆ ՊԷՅԻ

1 Յունիսին, Նիւ Եորքի եւ Նիւ Ճորջիի հայ համայնքի անդամներ յատուկ ընդունելութիւն մը կազմակերպեցին ի պատիւ Ինտիանայի դեմոկրատ ծերակուտական Էվըն Պէյլի, որուն անունը կը յիշուի նաեւ նախագահական ընտրութիւններուն կապակցութեամբ:

Ընդունելութեան ընթացքին խօսք առաւ Հայ Դատի Ցանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան, որ ամփոփ ձեւով ներկայացուց ամերիկահայութիւնը հետաքրքրող հարցերը եւ շնորհակալութիւն յայտնեց ծերակուտական Պէյլին՝ Հայկական Յեղասպանութեան բանաձեւին իր զօրակցութեան համար:

Ծերակուտական Պէյլ իր խօսքին մէջ բացատրեց, թէ Հայկական Յեղասպանութիւնը պաշտպանելով՝ ինք ուրախութիւնը ունի այդպիսով իր հօր կտակը իրեն հետ կրած ըլլալուն համար: 1960ականներուն Մերակոյտին մէջ ծառայելու ժամանակաշրջանին, Պրիւքսէլի (Էվըն Պէյլի հայրը) բուռն ձեւով պաշտպանած է Հայկական Յեղասպանութիւնը յիշատակելու գաղափարը: Ծերակուտական Պէյլ ընդգծեց անցեալի ճշգրտագոյնութիւնները ճանչնալու կարեւորութիւնը, որպէսզի կարելի ըլլայ մարդկութեան դէմ կատարուելիք նոր ոճիրները կանխել:

ՀԱՆԴՈՒՊՈՒՄ ՔՈՆԿՐԷՍԱԿԱՆ ՄԱՐՔ ՔՐՐՔԻ ՀԵՏ

Ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ քննարկեցին սակայն Մարք Քրրքի հետ վերջերս քննարկած են Հայկական Յեղասպանութեան եւ թուրքիոյ կողմէ ուրացման շարունակուող քաղաքականութեան հարցերը: Հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ Հայկական Յեղասպանութիւնը իր ներքին դպրոցներու կրթական ծրագիրներուն մէջ ներառնելու հարցը:

Շեշտելով իր ներքին ճանաչողութեան մասին տեղեկացնելու անհրաժեշտութիւնը՝ քննարկեցիները ըսած է. «Երբ մեր երեխաները կը սորվին աշխարհի պատմութիւնը, անհրաժեշտ է, որ անոնք զիտնան պատմութեան լաւագոյն եւ վատագոյն դրուագները: Հայկական Յեղասպանութեան մանրամասնութիւնները հսկայն են պատմութեանը կարեւոր դասեր քաղելու իմաստով»:

ԹՈՒՐԻՔԻԱ ՄՏԱՀՈԳ Է ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՄԲ ԿՐՍԷ ԱՔՍՈՒ

Թուրքիոյ ներքին գործոց նախարար Ապտիլթաթիւր Աքսու վերջերս յայտարարեց, թէ՛ «Հայաստանի կողմէ Լեռնային Ղարաբաղի շարունակուող բռնագրաւումը կը սպառնայ Կովկասի խաղաղութեան եւ կայունութեան»: Երկօրեայ այցելութեամբ մը Պաքու մեկնելէն առաջ Աքսու Անդարայի «Էսենկոյա» օդակայանին մէջ յայտարարեց, թէ միայն բանակցութիւններու միջոցով կարելի է հասնիլ արդար եւ միայն լուծման: Աքսու դիտել տուաւ, թէ թուրքիա մտահոգ է Արաբիանի կայունութեամբ եւ իբրեւ դրաքի երկիր ու ԵԱՀԿի Մինսքի խմբակի անդամ՝ ճիշդ չի խնայել Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման համար:

ԱՅՀԻԼ

AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Stricks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱՐՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅԴՈՒ, ԱՅԵՏԻ ԸՆԷ, Բ. ՅԱՄԿ (ՇՈՒ, 101) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ASHJIAN TOURS

ԵՐԱՎԱՊՏՈՅՆԵՐ

4. Երեւան քոթ ու դարձ ՀայկաՅԻ ARMAVIA AIRLINES-ով օդակայանի տուրքով միայն 230 \$:

Հ. ԱՒԵՏ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԸՐՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Աստուծոյ ապաւինելով՝ 2003 - 2004 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշակերտներու համար, սկսած են եւ կը շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 1:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն): Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց է միայն Չորեքշաբթի օրերը ժամը 8:30էն 12:00:

Նորել աշակերտները կը պահանջուի՝ ա. Վերջին երկու տարուան վիճակագրոյ գ. Ինքնուրուագ բառին իմաստը, զայն չփոխելով 1915ին Օսմանեան կայսրութեան մէջ գտնուած «ցաւալի դէպքերուն» հետ: ԹՈՒՍԻԱՏ, որ սկիզբէն ի վեր եղած է Հայկական Յեղասպանութիւնը ուրախացող, բացարձակապէս կը մերժէ 1915ի դէպքերուն տակ ճշգրտագոյնութիւնը մարդկային կարգի ճշգրտագոյնութիւնը, որպէսզի «մեզի թողնէ», որովհետեւ այդ մէկը անընդունելի է եւ մեծ սխալ մըն է՝ նկատի ունենալով ճշգրտագոյնութիւնը բառին բարձր իմաստը: Ըստ կազմակերպութեան, նման երեւոյթ մը, պատմական դիտանկարներէն զտուած, մեծ սխալ կը նկատուի եւ կողմնակցութիւն կը սեպուի ի վնաս թուրքերուն, եւ հետեւաբար՝ անոր հետեւ:



ՎԵՐԱՍՈՒՏ
ա. - BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003
բ. - Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Շուկտեմբեր 2003
գ. - Մանկապարտէզ - Կինգաբաթ, 2 Շուկտեմբեր 2003
դ. - Նախկին վարժարանէն աշակերտին պետական քիւլ՝ վաւերացում:

ՎԵՐԱՍՈՒՏ
ա. - Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003
բ. - Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Շուկտեմբեր 2003
գ. - Մանկապարտէզ - Կինգաբաթ, 2 Շուկտեմբեր 2003
դ. - Նախկին վարժարանէն աշակերտին պետական քիւլ՝ վաւերացում:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Համահայկական Խաղերու յանձնախումբին պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն Հ. Մ. Բ. Մ.ի Լիբանանի Երջանային վարչութեան ատենապետ՝ Ճոնի Արեւեան, Միւսաբ Նաճարեան (Հ. Մ. Մ.), Կարօ Ճըղըլեան (Անդրանիկ), Նշան Համամճեան (Միփան - Գառնիկ), Գրիգոր Պոյաճեան (Հ. Կ. Մ.) եւ Ալեք Պալեան (Ջանից):

Պատուիրակութիւնը նախարար Յովնանեանին ներկայացուց յանձնախումբին աշխատանքները՝ Երեւանի մէջ տեղի ունենալիք Համահայկական 3րդ խաղերուն Լիբանանի մասնակցութեան առնչութեամբ: Համահայկական խաղերը տեղի պիտի ունենան յառաջիկայ 16էն 24 Օգոստոսին, մասնակցութեամբ բազմաթիւ երկիրներէ իրենց մասնակցութիւնը բերող մարզիկներու:

Այդ ուղղութեամբ պատուիրակութիւնը նախարար Յովնանեանը հրաւիրեց հովանաւորելու յառաջիկայ 25 Յունիսին տեղի ունենալիք ընթրիքի երեկոն, որուն ընթացքին գոյացած հասցիք պիտի տրամադրուի Լիբանանէն Հայաստան մեկնող մարզիկներուն, որոնք պիտի ներկայացնեն Պէյրութը:

Նախարար Յովնանեանի պատրաստակամութիւնը յայտնեց կարելի բոլոր միջոցներով օժանդակելու, ի խնդիր՝ Համահայկական 3րդ խաղերուն յաջողութեան:

ՊԼԵՔՊԵՐՆ ԶՈՒԶԵՐ ԶԵԼՍԻԻ ՓՈԽԱՆՑԵԼ ՏԱՅՇ

Պլեքպըրնի մարզիչ Կրէիէմ Սունէս երէկ յայտնեց, թէ հակառակ անոր որ Չելսիի Պլեքպըրնի մարզիչին Տէմիըն Տաֆի համար պատրաստ է վճարել 15 միլիոն փաունտ (24 միլիոն ամերիկեան տոլար), սակայն ինք իր կարելիին պիտի ընէ 24 տարեկան մարզիչը իր կազմէն ներս պահելու համար:



Տէմիըն Տաֆ

Լիվըրպոլի եւ Սկոթլանտի նախկին միջնապահ Սունէս, նորարարական լուծումով Տաֆի, ըսաւ. «Երբ ան անցեալ ամառ նոր պայմանագրութիւն մը ստորագրեց մեկի հետ, երբեք չէր ակնկալէր, որ օր մը իր ստորագրութիւնը ձեռք ձեռք ձգելու համար այդքան հսկայական գումար պիտի առաջարկուի, մեր կարելիին պիտի ընենք պահելու համար Տաֆը»:

Պլեքպըրնի պատասխանատուներէն Ճոն Ուիլիքսն երէկ յայտնեց, թէ իրենց կազմին միացուցին Ռեյնալտ Բէյնսըրըի յետապահ Լորենցօ Ամորոսոն, որուն փոխանցումը բրիտանական կազմին արժէք 1,5 միլիոն փաունտ (2,5 միլիոն ամերիկեան տոլար):




Ամորոսո

32 տարեկան Ամորոսո, այսպիսով վեց եղանակ մաս կազմելէ ետք Ռեյնալտի, կը հեռանայ Ալյարքսէն:

ՃՐԱՆՍԱՅԻ ԴԵԾԵԼԱՐՇԱԻ ԾՐԱՎԱԶՔ

ՊԵԼՈՔԻ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ ԾԱՆՐ ԱՐԿԱԾԻ

Ճրանսայի հեծելաբանի շրջավազին 9րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ Պուրտ'Ուալանէն՝ Կափ (184,5 քմ.), թէեւ վերջ գտաւ Թելեքոմի դապախ հեծելանորդ Ալեքսանտր Վինոքուրովի յաղթանակով, սակայն անոր արձանագրած այդ յաղթանակը մնաց շուքի մէջ, նկատի ունենալով, որ Ալպեան լեռներու մէջ տեղի ունեցած վերջին օրուան այս հանգրուանի:



Հեծելանորդները՝ Ալպեան լեռներու շրջավազին ընթացքին

շրջավազին տիտղոսին: 31 տարեկան



Վինոքուրով

ւանին մեծագոյն «պոլը» հանդիսացաւ սպանացի Խոսեպա Պելոքի (ՕՆՍԷ), որ պտիվարի վրայ չկարենալով գապել իր հեծանիւրը, ժամանման գիծէն քիչ մը առնչուեցաւ ծանր արկած մը

իր հեծելանիւնով գետին տապալիլ, եթէ չկարենար գապել ինքզինքը:

Թէեւ Արմսթրոնկ 36 երկվայրկեան ուշացումով հասաւ ժամանման գիծ, գրաւելով չորրորդ դիրքը, սակայն հեծելանորդներու ընդհանուր դասաւորման մէջ, ան այժմ 21 երկվայրկեանի տարբերութեամբ կը գերազանցէ Վինոքուրովը, որ երէկուան հանգրուանին արձանագրեց 5 ժամ եւ 2 վայրկեան արդիւնք մը: Իտալացի Փաուլօ Պէթթինի (Քուիթ Սթեփ) 9րդ հանգրուանին գրաւեց 2րդ դիրքը, իսկ սպանացի Իպան Մայօ (Էուքալթեյ) 3րդ դիրքը:

Արմսթրոնկ յաջողեցաւ իր մօտ պահել դերին շապիկը. մինչ



Պելոքի՝ իր ունեցած արկածէն ետք

աւտորալիացի Պէյտըն Քուր (Էֆ. Տէ. Ժէօ) կանաչ շապիկը:

Այսօր տեղի կ'ունենայ 10րդ հանգրուանի մրցումը, Կափէն՝ Մարսէյ (219,5 քմ.): Վաղը՝ 2րդ օրը, հեծելանորդները իրենց հանգիստի առաջին օրը կ'ունենան, պատրաստուելով Հինգշաբթի, 17 Յունիսին տեղի ունենալիք 11րդ հանգրուանի մրցումին, Նարպոնէն՝ Թուլուզ (153,5 քմ.):



Արմսթրոնկ

եւ փոխադրուեցաւ ամէնէն մօտիկ հիւանդանոցը:

Կիրակի օրուան 8րդ հանգրուանէն ետք, ընդհանուր դասաւորման մէջ, միայն 40 երկվայրկեան տարբերութեամբ ամերիկացի Լէնս Արմսթրոնկէն (Եու. Էս. Փոսթալ) ետ մնացած Պելոքի այսպիսով կը քաշուի մրցաշարէն, մեծ առիթ մը տալով Արմսթրոնկի, որ կրկնապատկէ իր յուսերը՝ յաջորդաբար հինգերորդ տարին ըլլալով տիրանալու այս

- Ստորեւ՝ հեծելանորդներուն ընդհանուր դասաւորումը.
- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ 40 ժամ 15' 26"
 - 2.- Ալեքսանտրօ Վինոքուրով (Ղապախաստան) Թելեքոմ 21' ուշ
 - 3.- Իպան Մայօ (Սպանիա) Էուքալթեյ 1' 02" ուշ
 - 4.- Ճրանչեքօ Մանքեպօ (Սպանիա) Իպանեքսօ 1' 37" ուշ
 - 5.- Թալլըր Հէմիլթըն (Մ. Ն.) Քուիթ Սթեփ 1' 52" ուշ
 - 6.- Եան Ուլրիշ (Գերմանիա) Պիանքի 2' 10" ուշ
 - 7.- Իվան Պասսօ (Իտալիա) Ճասսա Պորթոյօ 2' 25" ուշ
 - 8.- Ռոպերթօ Հերաս (Սպանիա) Եու. Էս. Փոսթալ 2' 28" ուշ
 - 9.- Հայմար Չուպելտիա (Սպանիա) Էուքալթեյ 3' 25" ուշ
 - 10.- Տենիս Մենչով (Ռուսիա) Իպանեքսօ 3' 45" ուշ

- Ստորեւ՝ կետերու ընդհանուր դասաւորումը.
- 1.- Պէյտըն Քուր (Աւստրալիա) Ֆէ. Տէ. Ժէօ 120 կէտ
 - 2.- Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա) Լոթօ 110 կէտ
 - 3.- Թորո Ռուսոնով (Նորվեգիա) Զրետի Ակրիքով 104 կէտ

- Ստորեւ՝ խումբերուն ընդհանուր դասաւորումը.
- 1.- Էուքալթեյ 118 ժամ 11' 19"
 - 2.- Եու. Էս. Փոսթալ 4' 11" ուշ
 - 3.- Իպանեքսօ 8' 34" ուշ

ԳԱՍՊԱՐՈՎ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԵՆԱՅ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏ

Աշխարհի ճատրակի լուսագոյն վարպետ Կէրի Գասպարով, որ այժմ կը գտնուի Միացեալ Նահանգներ, անցեալ շաբաթավերջին հանդիպում ունեցաւ Նիւ Եորքի հայկական համայնքին ներկայացուցիչներուն հետ՝ Ս. Վարդան էկեղեցույ մէջ:

Կր նախատեսուի, որ յառաջիկայ Նոյեմբերին Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունենայ Գասպարով - համակարգիչ երրորդ ճակատումը:

ԵՆԵՍԵԱՅ ՊՐԱԶԻԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՄԵՔՍԻՔԱՅԷՆ


Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող Քոնքաքսֆի «Կոլտ» բաժակի մրցաշարին, աշխարհի ախոյեան Պրապիլ, որ մաս կը կազմէ Ա. խմբակին, 1-0 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեց Մեքսիքայէն, Մեքսիքո քաղաքին մէջ երէկ տեղի ունեցած մրցումին: Մրցումին աւարտէն տասը վայրկեան առաջ Խարէտ Պրոկեթթի գլուխով նշանակեց իր կազմին եւ մրցումին «որ» կոլը: Նշենք, թէ Պրապիլ այս մրցաշարին կը մասնակցի Ռիմպիականի իր խումբով:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Մեքսիքա այսպիսով Պրապիլի դէմ իր կատարած յաջորդաբար հինգերորդ մրցումին մնաց անպարտելի, արձանագրելով երեք յաղթանակ եւ երկու հաւասարութիւն:

Բ. խմբակէն Քոլտայի 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց ժամայբան, Միացեալ Նահանգներ՝ Սալվատորը (1-0, Գ. խմբակ) եւ Քանտա՝ Քոսթա Ռիքան (1-0, Գ. խմբակ):

Նշենք, թէ վերոնշեալ ութ խումբերէն բացի այս մրցաշարին իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ՝ Հունտուրաս (Ա. խմբակ), Կուսթեմալա (Բ. խմբակ), Մարթինիք (Գ. խմբակ) եւ Քուպա (Դ. խմբակ):

ՊԱՃԻՕ ՊԻՏԻ ԵՆԹԱՐԿՈՒԻ ՇՈՒՆԿԻ ՎԻՐԱԲՈՒԹՈՒԹԵԱՆ



Պաճիօ

Պրեշիայի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ ակումբին մաս կազմող իտալացի նախկին միջնապահին մարզիչ, յառաջապահ Ռոպերթօ Պաճիօ ծունկի վիրաբուժութեան ենթարկուելու համար փոխադրուած է հիւանդանոց:

36 տարեկան Պաճիօ միայն մէկ օր պիտի մնայ հիւանդանոց: Կ'ակնկալուի, որ յառաջիկայ ամսուան սկիզբը ան վերսկսի իր փորձերուն:

Սեպտեմբեր 2000ին Պրեշիայի միացած Պաճիօ, ցարդ իր ակումբին հետ նշանակած է 33 կոլ: Անցեալ եղանակի աւարտին, հակառակ մարզիչ Քարլօ Մացոնի մեկնումին, Պաճիօ չ'ուզեց հեռանալ խումբէն:

ՍԻՍԷ ՊԱՏԺԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒՄԻ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ

Պիրմիսկիէմ Սիթիի պատասխանատուները յայտնեցին, թէ սենեկայի միջնապահին միջնապահ Ալիու Սիսէ իր ամառնային արձակուրդէն ուշացած ըլլալուն համար, ոչ միայն տուգանքի ենթարկուեցաւ, այլեւ անոր անունը դրուեցաւ մարզիկներու փոխանցման սակարանին վրայ:



Ալիու Սիսէ

27 տարեկան Ալիու սկսեցաւ իր ամառային Յունիս 2ին պիտի վերադառնար, փորձերու վերսկսելու համար, սակայն ուշացում արձանագրելով իր ամառային հաստատած օդէնքները, յայտնեց ակումբին մէկ պատասխանատուն:

